

**ՆԱՆՈՒՆ ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը**

**2006 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-ԻՆ ՆՅՈՒ ՅՈՐՔՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՆԱՇՄԱՆ-
ԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՄԱԿ-Ի ԿՈՆՎԵՆ-
ՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ԱՌԱՐԿՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՆՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՆԱՄԱՊԱՏԱՍԽԱ-
ՆՈՒԹՅԱՆ ՆԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 դեկտեմբերի 2009թ.

Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով.
Գ. Նարոյթյունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ն. Դանիելյանի (զեկուցող),
Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Վ. Նովհաննիսյանի, Ն. Նազարյանի,

համաձայն Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի
2-րդ կետի, 101 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»
Նայասպանի Նանրապետության օրենքի 25, 38 եւ 72 հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2006 թվականի դեկտեմբերի
13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Նաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների
մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում (կից առարկությամբ) ամրագրված պարտավորություննե-
րի՝ Նայասպանի Նանրապետության Սահմանադրությանը համապատասխանության
հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Նանրապետության Նախագահի դիմումն է՝ մուտքա-
գրված 2009 թվականի նոյեմբերի 19-ին:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՆՆ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարի փեղակալ Զ. Բաղդասարյանի բացաբությունները, հերագոբելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Կոնվենցիան ստորագրվել է 2006 թվականի դեկտեմբերի 13-ին՝ Նյու Յորքում: Հայաստանի Հանրապետության կողմից կոնվենցիան (կից առարկությամբ) ստորագրվել է 2007 թվականի դեկտեմբերի 30-ին: Առարկությունը վերաբերում է Ադրբեջանի Հանրապետության կողմից սույն կոնվենցիայի վավերացման ընթացքում կատարված վերապահմանը:

Կոնվենցիայի նպատակն է աշակցել, պաշտպանել եւ ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց՝ լիարժեքորեն եւ հավասարապես օգրվել մարդու իրավունքներից եւ հիմնարար ազատություններից, ինչպես նաեւ ապահովել հարգանքը նրանց նկատմամբ:

2. Կոնվենցիայով սահմանվում են ընդհանուր սկզբունքներն ու պարտավորությունները, հավասարությունը եւ հաշմանդամության վրա հիմնված ցանկացած խտրականության կանխարգելման մեխանիզմները, շեշտվում է այդ բնագավառում համագործակցության կարեւորությունը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հաշմանդամ երեխաների եւ կանանց պաշտպանության խնդիրներին:

3. Կոնվենցիան երաշխավորում է հաշմանդամ անձանց՝ կյանքի, օրենքի առաջ հավասարության, ազատության եւ անվտանգության, խոշտանգումների, շահագործման, բռնության եւ դաժան վերաբերմունքի բացառման, ազատ փեղաշարժի, խոսքի եւ կարծիքի ազատության, փեղեկափության մարջելիության, անձնական եւ ընտանեկան անձեռնմխելիության, կրթության, առողջության, աշխատանքի ու գրաղվածության, սոցիալական, մշակութային, քաղաքական ու քաղաքացիական եւ այլ հանրահայտ իրավունքների եւ ազատությունների պաշտպանությունը:

4. Կոնվենցիայի 34 հոդվածի համաձայն հիմնվում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե /այսուհետք՝Կոմիտե/, որի 18 անդամներն ընտրվում են 4 տարի ժամկետով՝ մեկ անգամ վերընտրման իրավունքով: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը Կոմիտեի աշխատանքների արդյունավետ իրականացման

համար փրամադրում է համապարասխան անձնակազմ եւ նյութական միջոցներ: Կոմիտեի անդամներին փրվում են այնպիսի արտոնություններ եւ անձեռնմխելիություն, որոնք սահմանված են ՄԱԿ-ի հարցերով առաքելություններ իրականացնող փորձագետների համար:

5. Կոնվենցիան սահմանում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն իր համար սույն կոնվենցիան ուժի մեջ մտնելուց հետո՝ 2 փարվա ընթացքում, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտեին ներկայացնում է համապարփակ հաշվեպետություն սույն Կոնվենցիայով սրանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումների եւ արձանագրված առաջընթացի մասին: Դրանից հետո մասնակից պետությունները ներկայացնում են հաշվեպետություններ՝ առնվազն 4 փարին մեկ անգամ, կամ Կոմիտեի պահանջով՝ ցանկացած պահի:

6. Կոնվենցիայի համաձայն մասնակից պետությունները պարբերաբար հանդիպում են մասնակից պետությունների համաժողովում՝ քննարկելու համար կոնվենցիայի կիրարկմանն առնչվող բոլոր հարցերը: Նամաժողովը հրավիրվում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից ոչ ուշ, քան կոնվենցիան ուժի մեջ մտնելուց 6 ամիս հետո: Ներագա նիստերը հրավիրվում են ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի կողմից՝ 2 փարին մեկ անգամ կամ համաժողովում կայացված որոշմամբ:

7. Կոնվենցիայով Նայաստանի Նանրապետությունն սրանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- ապահովել եւ օժանդակել հաշմանդամություն ունեցող անձանց՝ մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների լիակատար իրականացմանը՝ առանց հաշմանդամության վրա հիմնված ցանկացած խտրականության,

- փնտրեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների առումով քայլեր ձեռնարկել իր առկա միջոցների առավելագույն չափով, ինչպես նաեւ միջազգային համագործակցության շրջանակներում, նպատակ ունենալով աստիճանաբար հասնել այդ իրավունքների լիակատար իրականացմանը,

- ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ ապահովելու հաշմանդամ երեխաների եւ կանանց զարգացումը, առաջխաղացումը եւ պաշտպանությունը,

- ապահովել հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանությունն ու ապահովությունը վրանգավոր իրավիճակներում, այդ թվում՝ զինված հակամարտությունների, արտակարգ հումանիտար իրավիճակների եւ բնական աղետների դեպքում,

- ձեռնարկել անհրաժեշտ ու արդյունավետ միջոցներ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հավասար իրավունքն իրենց սեփականությունը փնտրելու կամ ժառանգելու, սեփական ֆինանսական գործարքները վերահսկելու եւ բանկային վարկերից, հիպոթեկից եւ ֆինանսական վարկավորման այլ միջոցներից օգտվելու համար, ինչպես նաեւ երաշխավորել նրանց սեփականության անձեռնմխելիությունը,

- ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք չպահվեն սպրկության կամ ծառայության մեջ եւ մյուսների հետ հավասար հիմունքներով պաշտպանված լինեն հարկադիր կամ պարտադիր աշխատանքից,

- ձեռնարկել արդյունավետ միջոցներ ապահովելու համար հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորինս ինքնուրույն շարժունակությունը,

- ձեռնարկել օրենսդրական, վարչական, սոցիալական, կրթական եւ այլ համապատասխան միջոցներ՝ շահագործման, բռնության կամ դաժան վերաբերմունքի բոլոր ձեւերից հաշմանդամություն ունեցող անձանց պաշտպանելու համար ինչպես փանը, այնպես էլ դրսում՝ հաշվի առնելով նաեւ հարցի գենդերային կողմերը,

- ճանաչել հաշմանդամություն ունեցող անձանց եւ նրանց ընտանիքների՝ կենսապահովման բավարար մակարդակ ունենալու եւ սոցիալական պաշտպանության, մյուսների հետ հավասար հիմունքներով մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը եւ այլն:

8. Կոնվենցիայում նախատեսված են առանձին դրույթներ՝ կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, դրանում վերապահումներ կամ փոփոխություններ կատարելու, ինչպես նաեւ մասնակից պետության կողմից այն չեղյալ հայտարարելու վերաբերյալ:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Նայասպանի Նանրապետության Սահմանադրության 100 հոդվածի 2-րդ կետով, 102 հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Նայասպանի Նանրապետության օրենքի 63 եւ 64 հոդվածներով, Նայասպանի Նանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2006 թվականի դեկտեմբերի 13-ին Նյու Յորքում ստորագրված՝ Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայում (կից առարկու-

թյամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102 հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՏՈՂ

Գ. ՆԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

18 դեկտեմբերի 2009 թվականի
ՍՂՈ-846